## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

21 հուլիսի 2023 թվականի թիվ 74-Ա
ք. Երևան

## «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն, նոր անվանումը՝ «ԱՆՅՈՒԶ» ՓԲԸ) 2023 թվականի հուլիսի 18-ի հեղինակազորման վկայագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Բավարարել դիմումը և ուժը կորցրած ճանաչել «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերությանը 2020 թվականի սեպտեմբերի 18-ին տրամադրված ՀՎ № 022 հեղինակազորման վկայագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2023թ. հուլիսի 21
ք. Երևան